Azg
23 ՄԱՅԻՍ 1996 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 94 (1100)

Թանսու Չիլլերը Մեսութ Յըլմազին հրաժարական տալու կոչ արեց

ԱՆԿԱՐԱ, 22 ՄԱՅԻՍ, ՆՏ-AFP. Թուրքիայի նախկին վարչապետ Թանսու Չիլլերը չորեքշաբթի օրը կոալիցիոն իր գործընկերոջը՝ վարչապետ Մեսութ Յըլմազին կոչ է արել, որ վերջինս հրաժարական տա, հասկացնելով, որ ինքը մտադիր է կամ լքել կոալիցիոն, կամ էլ այլ գործընկերներ փնտրել: Նորությունների Անատոլու գործակալության տվյալների համաձայն, Չիլլերը իր «Ճշմարիտ ուղի» կուսակցության խորհրդարանական ժողովի ժամանակ ասել է, որ վարչապետը ոչնչ է իր մանդատը անհրաժեշտ հանձնի նախագահին: Չիլլերի հայտարարությունն արվել է այն ժամանակ, երբ Յըլմազի «Մայր հայրենիք» եւ Չիլլերի «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների կոալիցիոն կառավարությունը կարվածահար էր եղել ներքին գժտությունների ոլորտում: Ի լրացումն երկու կուսակցությունների միջեւ գոյություն ունեցող անվստահության ճգնաժամի, սահմանադրական դատարանը անցած շաբաթ չեղյալ է հայտարարել երկու ամիս առաջ տեղի ունեցած կառավարության վստահության քվեարկությունը, ասելով, որ այն սխալ ձեւով է ընթացել:

ԵԿԵՂԵՑԻ

Անթիլիասի մյուռոնօրհնեքին Ս. Էջմիածնից օրհնություն

Ինչպես հաղորդել էինք նախապես, առաջիկա կիրակի օրը, մայիսի 26-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարում հանդիսավոր պայմաններում տեղի կունենա ս. մյուռոնի օրհնություն, որին կմասնակցեն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակա թեմերի եւ վիճակների հոգեւոր առաջնորդներն ու ավագանիներ: Արարողություններին ներկայացուցչական կարգով կմասնակցի նաեւ Մայր աթոռ Ս. Էջմիածինը: Այսպես, ընդառաջելով Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հրավերին, Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Ա կաթողիկոսն իր օրհնությունն է հղել Անթիլիասին եւ հրամայել Փարիզում հայրապետական պատվիրակ եւ առաջնորդ Գյուլ արքեպիսկոպոս Նագգաշյանին եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին ներկայացնելու Մայր աթոռ Ս. Էջմիածինը մայիսի 26-ին կայանալիք մյուռոնօրհնեքին: Երկուշաբթի երեկոյան Գարեգին սրբազանը երեւանից մեկնել է Բեյրութ, մինչ Գյուլ սրբազանը Լիբանան կժամանի այս օրերին:

Հանդիպում Գերմանիայի դեսպանի հետ



մի շարք հրապարակ խնդիրների շուրջ:

Տես նաեւ էջ 3

Մայիսի 22-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Նորբերտ Հայնցեի հետ, որը Բահրեյնում Գերմանիայի դեսպան նշանակվելու կապակցությամբ մոտ օրերս մեկնելու է Հայաստանից:

Բարձր գնահատելով պարոն Հայնցեի լումանի երկու պետությունների փոխհարաբերությունների զարգացման գործում, ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետը բարի մաղթանքի խոսքեր ուղղեց Գերմանիայի պետության առաջին պետական ներկայացուցչին նորանկախ Հայաստանում: Զրույցի ընթացքում տեղի ունեցավ կարծիքների փոխանակում ներքին եւ արտաքին քաղաքականության

Զոզեֆ Փրեսելը կրկին Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ազատանտիային այցով տարածաշրջան է ժամանել ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ-ի ներկայացուցիչ, դեսպան Զոզեֆ Փրեսելը: Մայիսի 22-ին դեսպանին ընդունել է ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի հետ կապված խնդիրներ, մասնավորապես այդ ուղղությամբ ձեռնարկվելիք առաջիկա քայլերը: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ ՀՀ արտգործնախարարի տեղակալ Վարդան Օսկանյանը: Դեսպան Զոզեֆ Փրեսելը Հայաստանից կմեկնի Ադրբեջան:

ԱՍԼ

Քլինթոնը հրաժարվում է մարդասիրական օգնության միջանցքի մասին օրենքից

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 21 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայ դատի հանձնախումբը հայտնում է, որ ըստ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հաղորդման, նախագահ Բիլ Քլինթոնը ստորագրել է մի հրամանագիր, որով երաշխավորվում է «Մարդասիրական միջանցքի մասին» օրենքը, այնքանով, որքանով այն առնչվում է Թուրքիային: Հրամանագիրը ճանապարհ է հարթում դեպի Թուրքիա կատարվելիք ամերիկյան օգնության համար, չնայած այն բանին, որ Թուրքիան արգելափակել է Հայաստան ուղարկվող ամերիկյան օգնությունը:

Պետդեպարտամենտի Թուրքիայի գծով ղեկավար Մարտին Աղամսը այս հարցի վերաբերյալ Ամերիկայի Հայ դատի հանձնաժողովի հարցմանը պատասխանել է, որ ԱՄՆ-ի նախագահը 1996 թվականի արտաքին օգնության մասին օրինագծում խախտել է Մարդասիրական օգնության մասին օրենքը Թուրքիայի դեպքում:

Հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համփարյանը ասել է, թե իրենք հիասթափված են, որ վարչակազմը, պարզորոշ կերպով արհամարհելով Կոնգրեսի կամքը, որոշել է մի կողմ դնել խելամիտ չափանիշներ, որով առաջնորդվում էին արտաքին օգնությունը բաշխելիս: «Թուրքական կառավարությանը իր անընդունելի գործողությունների համար պատասխանատվության չկանչելը Թուրքիային կխրախուսի շարունակել Հայաստանի անօրինական շրջափակումը, եւ Հայաստանի ժողովրդին կզրկի խիստ անհրաժեշտ մարդասիրական օգնությունից», ասել է նա:

ԼՂՀ

Ազգային ժողովը ավարտեց եռօրյան

Նախագահի ընտրության մասին օրենքի նախագիծը ընդունվեց

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Մայիսի 22-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստն սկսվեց մեկ րոպե լռությամբ: Խորհրդարանի խոսնակ Արթուր Թովմասյանի առաջարկությամբ պատգամավորները հարգեցին 1918թ. Սարդարապատի ճակատամարտում զոհվածների հիշատակը: Նույն օրը խորհրդարանը քննարկեց «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին» օրենքի նախագիծը, որն ընդունվեց նախագահ Ռոբերտ Քոչարյանի առարկությունները հաշվի առնող ուղղումներով: «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի քննարկմանը մասնակցեց նաեւ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանը: Առաջին ընթերցմամբ քննարկելով օրենքի նախագիծը, Ազգային ժողովը որոշեց այն լրամշակման վերադարձնել Մարդու իրավունքների եւ ազգային փոքրամասնությունների հանձնաժողովին, որը պատրաստել էր այդ փաստաթուղթը:

Խորհրդարանի աշխատակարգին համապատասխան, հերթական եռօրյա նիստը կկայանա երկու շաբաթ անց:

«ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն, Թուրքիան եւ Չինաստանը Ռուսաստանի գլխավոր թշնամիներ»: Ժիրինովսկի

ՄՈՍԿՎԱ, 22 ՄԱՅԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Ռուսաստանի նախագահության ծայրահեղ ազգայնական թեկնածու Վլադիմիր Ժիրինովսկին չորեքշաբթի օրն իր հեռուստատեսային նախընտրական արշավի առաջին երեքշաբթի է ունեցել եւ Միացյալ Նահանգներին անվանել է Ռուսաստանի հիմնական թշնամի: Ժիրինովսկին օգտագործել է իր անվնաս հեռուստաժամը ռուսական հիմնական ՕՐՏ ալիքով «ջախջախելով» ՆԱՏՕ-ն, Թուրքիան եւ Չինաստանը՝ իբրեւ Ռուսաստանի մյուս հիմնական հակառակորդների: Նա ասել է, թե ՆԱՏՕ-ի դեմքն Արեւելք ընդարձակումը շուտով կհանգեցնի Ռուսաստանի շեմին թշնամական զորքերի տեղաբաշխմանը: Այնուհետեւ Ժիրինովսկին ավելացրել է, թե «այն ամենը, ինչի մասին երազում էր ֆաշիստական Գերմանիան 1941 թվականին, տեղի է ունենում այժմ 1991-96 թվականներին: Նրանք կուզեն տալու Ռուսաստանի տարածքը»: Ժիրինովսկին խոստացել է, որ հաջորդ ամիս ընտրվելու դեպքում կիշխի «երկաթե ձեռքով» եւ վերջ կտա հանցագործություններին, կաշառակերությանը, Չեչնիայի պատերազմին եւ կկարգավորի Ռուսաստանի տնտեսական հիմնախնդիրները: Նա ասել է, թե ռուս [illegible] կբացվի է զարերից, [illegible] ինչպես նաեւ ժողովրդ[illegible] ավարներից: Սակայն ընդամենը [illegible] էաբաթ իր նախընտրական արշավը Ժիրինովսկին [illegible] եւ երկիրը կառավարելու հա[illegible] [illegible] չունենալու կոչով: Այն [illegible] նա ասել էր, թե Ռուսաստանը նոր կայսրի կարիք ունի այնպիսի լիազորություններով, ինչպիսին ունեին զարերը կամ կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղարը:

Մահափորձից փրկված գեներալ Ռեուսը Թբիլիսից ժամանեց Երեւան

ՍՈՍԿՎԱ, 22 ՄԱՅԻՍ, ՆՏ-DPA. ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը չորեքշաբթի օրը հայտնել է, որ Վրաստանում մահափորձ է արվել ռուսական զինված ուժերի հրամանատարի դեմ: Գործակալությունը հայտնել է, վկայակոչելով ոստիկանական աղբյուրները, որ միջադեպը տեղի է ունեցել Թբիլիսիում, երբ մեքենաների շարքը, որոնց թվում էր հրամանատար Ֆյոդոր Ռեուսի մեքենան, շարժվելիս է եղել Ռուսթավելիի պողոտայով: Ռեուսը չի տուժել: Հաղորդագրության մեջ չի ճշտվում, թե որ ժամին է տեղի ունեցել միջադեպը: Սակայն չորեքշաբթի օրը, առնվազն օրվա երկրորդ կեսում, գեներալ Ֆյոդոր Ռեուսը եղել է Երեւանում:

Ռումբի պայթյունից 28 հոգի զոհվեցին Դելիի շուկայում

ՆՈՐ ԴԵԼԻ, 22 ՄԱՅԻՍ, ՆՏ-AFP. Երեքշաբթի օրը Նոր Դելիի մարդաշատ շուկայում պայթել է մեքենայի մեջ դրված մի ռումբ, որի հետեւանքով 28 հոգի զոհվել են: Պայթյունի համար հնդկասանը մեղադրում է Պակիստանին: Ներքին գործերին նախարար Կ. Պադմանաբհայահը AFP-ի թղթակցին հայտնել է, որ պայթյունը, որը տեղի էր ունեցել վարչապետ Ռաջիվ Գանդիի սպանության 5-րդ տարեդարձը նշելուց ոչ շատ անց, կազմակերպվել էր Իսլամաբադի կողմից: «Մենք տեսնում ենք Պակիստանի ձեռագիրը: Մենք կոնկրետ ապացույցներ ունենք նրանց մասնակցության վերաբերյալ», ասել է նա, ավելացնելով, որ իրենց երկրի անվտանգությունը խախտվում է: Նախարարը մանրամասնություններ չի հայտնել, իսկ Իսլամաբադի կողմից առայժմ արձագանքներ չեն եղել:

Միշել Կամդեսյուն վերընտրվեց IMF-ի նախագահ

Երեկ, հաջորդական 3-րդ անգամ Միջազգային արժույթային հիմնադրամի նախագահ Միշել Կամդեսյուն 5 տարով վերընտրվեց իր պաշտոնում: Հիշեցնենք, որ անցյալ մարտի կեսերին Միշել Կամդեսյուն այցելել էր Երեւան եւ արդյունավետ բանակցություններ վարել Հայաստանի բարձրաստիճան պաշտոնատարների հետ:

Արմեն Ջիգարխանյանը Երեւանում

«Ծնունդ տնտրհավոր»

«Արշագանքի» հետ երգում էր օպերայի դահլիճը



«ՀՀ մշակույթային կյանքում նշանակալից իրադարձություն է. նշում ենք Արմեն Ջիգարխանյանի 60 ամյակը: Դեռասան, արտիստ, արվեստագետ, որ մեր սերը լինելով հանդերձ մեր մշակույթի արդարացումներից մեկն է», օպերային բատրոնի բեմից երեկ ողջույնի իր խոսքում ասաց ՀՀ մշակույթի, տպարտի, երիտասարդության հարցերի նախարար Հակոբ Մովսեսը: «Ինչ ասես, որ անում ազգանունից ավելի լավ ներկայացնի: Փառք հեզ, հայ ժողովուրդ, որ ծով յուսնվարով, օվկիանսի լողդ ես տալիս», գնահատեց հանդիսատեսին ԹԳԱՄ նախագահ երգչուհի Դ. Ազանչյանը: «Անասակ ոգու վերադարձը» մեծ նկարիչներից ո՞վ չի վրձնել, հենց այս դահլիճ է», հուզուստատն ավելացրեց Արմեն Գուլակյանի դերասանական դպրոցի երգչի աշակերտը: Արմեն Խուսիկյանը «Արմենը իր հետ բերեց մի փքոտոտ, որ մեր դպրասենյակն Երեւանն էր», ասաց նրա դասընկերոջ հուշերը: բարձրախոսով «երերեց» մյուս կուրսեցին օպերային բատրոնի տնօրեն Տիգրան Լեւոնյանը: Մայիսի 22-ի երեկոն, որտեղ էլ հանդիսավոր պայմաններում, պաշտոնական դասընթաց չկարողացավ: Ոչ էլ նվերների ու ծաղիկների առատությունը բացակայիր Արմեն Ջիգարխանյանին ստիպեց մոռանալ, որ ինքը մեծարվող էր. ՀՀ նախագահի հրավերը որ մերժեր էլ, հանդիսատեսի հիշողության մեջ «պարտադրված» է պարում: Հրավիրատոմսի երկու պետությունների հեռագրերով ձեւավորումը բերեց միակ պաշտոնական «անկեղծանն էր», որը երեկոյի վերջում Արմեն Ջիգարխանյանի ստորագրությունն իր վրա կրելով «հնարավորեց» օրվա հերոսի ռուսերենով հնչած խոսքին. «Ակում եմ կամաց-կամաց ընտելանալ «վիկիկի» բառին: Կենդանությանս օրոք չեմ ուզում հուշարձան դառնալ»:

Թանսու Չիլլերը Մեսութ Յըլմազին հրաժարական տալու կոչ արեց

ԱՆԿԱՐԱ, 22 ՄԱՅԻՍ, ՆՏ-AFP. Թուրքիայի նախկին վարչապետ Թանսու Չիլլերը չորեքշաբթի օրը կոալիցիոն իր գործընկերոջը՝ վարչապետ Մեսութ Յըլմազին կոչ է արել, որ վերջինս հրաժարական տա, հասկացնելով, որ ինքը մտադիր է կամ լքել կոալիցիոն, կամ էլ այլ գործընկերներ փնտրել: Նորությունների Անատոլու գործակալության տվյալների համաձայն, Չիլլերը իր «Ճշմարիտ ուղի» կուսակցության խորհրդարանական ժողովի ժամանակ ասել է, որ վարչապետը ոչնչ է իր մանդատը անհրաժեշտ հանձնի նախագահին: Չիլլերի հայտարարությունն արվել է այն ժամանակ, երբ Յըլմազի «Մայր հայրենիք» եւ Չիլլերի «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների կոալիցիոն կառավարությունը կարվածահար էր եղել ներքին գժտությունների ոլորտում: Ի լրացումն երկու կուսակցությունների միջեւ գոյություն ունեցող անվստահության ճգնաժամի, սահմանադրական դատարանը անցած շաբաթ չեղյալ է հայտարարել երկու ամիս առաջ տեղի ունեցած կառավարության վստահության քվեարկությունը, ասելով, որ այն սխալ ձեւով է ընթացել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՍՎԻՍՏԻԱ

Ինքնաթիռների պարկի փոփոխությունը՝ անհրաժեշտություն

Որքանո՞վ են Հայաստանի ինքնաթիռները ապահովագրված ավիավթարներից. ի՞նչ կարգով է տարվում տեխնիկական վերանորոգումը. զգացվո՞ւմ է արդյոք ինքնաթիռների պարկի փոփոխության անհրաժեշտություն: Մեր հարցին պատասխանում է «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության տեխնիկական բազայի պետ Վիկտոր Ադյանը:

Այսօր կան ինքնաթիռներ, որոնք պահեստամաս չլինելու պատճառով կանգնած են: Երբ ինքնաթիռի որևէ մաս իր օգտագործման ժամկետը սպառել է եւ ենթակա է փոփոխության, ուրեմն դա փոխվում է, իսկ եթե պահեստամաս չկա, ապա չի նշանակում, որ ինքնաթիռը անարժեք վիճակում օդ բարձրանա, այսինքն բացառվում է, որ թռիչք կատարվի այն պահեստամասով, որ լրիվ սպառել է իր ռեսուրսը եւ ենթակա է փոփոխման: Եթե գա պահ, երբ պահեստամասեր չլինեն, ավելի շատ կկանգնեցվեն բոլոր թռիչքները, բայց անարժեք վիճակում ինքնաթիռը թռիչք չի կատարի: Ներկա իրավիճակով «Զվարթնոց» օդանավակայանը շահագործում է 7 Տու154, 7 Տու134 (որից երկուսը շահագործում է Գյումրիի օդանավակայանը), 2 Իլ-86 ինքնաթիռներ, և կան ինքնաթիռներ, որոնք պահեստամաս չլինելու պատճառով չեն շահագործվում:

– Ինչպիսի՞ն է ավիաընկերության ֆինանսական վիճակը, կա՞ն պահեստամասերի ձեռքբերման դժվարություններ:

– Պահեստամասերի վերանորոգման գները հասել են ահռելի չափերի: Նախկինում վերանորոգման գումարները վճարվում էին կենտրոնացված, նախարարության կողմից, իսկ հիմա, մեր շահագրգիռ որոշակի տոկոսներ պահելով, Հիմա շատ ավելի բարդ է, անցկացվել նոր տնտեսական օրենքներ, որոնք ստիպում են նախապես կանխիկ գումար մուծել եւ նոր միայն շահագործեն: Այսօրվա իրավիճակով Տու154 ինքնաթիռի միայն շարժիչի վերանորոգումը արժե 1,5 մլրդ ռուբլի, իսկ Տու134-ի շարժիչը 900 մլն ռ.: Սա միայն ավիաընկերության խնդիրն է:

– Զգացվո՞ւմ է ինքնաթիռների պարկի փոփոխության անհրաժեշտություն:

– Արդեն ասելիանաբար պարկի փոփոխությունը անհրաժեշտություն է դառնում: Տու134, Տու154 ինքնաթիռները մոտենում են իրենց ռեսուրսների ավարտին: Նրանց համար կան 25 տարվա աշխատանքային, աշխատաժամի եւ վայրէջքների համար սահմանված ռեսուրսներ: Եւ եթե ինքնաթիռի այդ պարամետրերից բեկուզ մեկը հասնի իր հանգման եզրին, ապա հնարավոր չի հետագա շահագործումը: Արդեն որոշ ինքնաթիռներ մոտենում են այդ եզրին, ուստիի պարկի փոփոխությունը զգալի է դառնում: Անհրաժեշտ է, որ այս գործընթացը ասելիանաբար կատարվի: Նախ, պետք է բերել նոր ինքնաթիռ, որի շահագործման համար պահանջվում է մոտ մեկ տարի ժամկետ, որպեսզի հնարավոր լինի ծանոթանալ ինքնաթիռների ներդրման բոլոր պահանջներին, վերապատրաստել թռիչքային եւ տեխնիկական սպասարկման անձնակազմը: Նոր ինքնաթիռների շահագործումը եւ հների դուրսգրման աշխատանքները պետք է զուգընթաց կատարվեն, որպեսզի չգա մի պահ, որ ինքնաթիռների ռեսուրսների սպառման պատճառով թռիչք չկատարվի, իսկ նոր ինքնաթիռ էլ չլինի: Ուստի ժամանակն է հոգալ նոր տիպի ինքնաթիռների ընտրության շուրջ:

– Ի՞նչ արժե մեկ նոր՝ ասենք, Բոինգ կամ Տու-154M ինքնաթիռը:

– Միանշանակ հնարավոր չէ ասել, քանի որ շատ հաճախ գներ փոխվում են: Տու-154M-ը կես տարի առաջ մոտավորապես 5-6 մլն դոլար էր, իսկ Բոինգ ինքնաթիռի արժեքը շատ ավելի բարձր է, եւ հնարավոր չէ լրիվ գումարը միանգամից մուծել, դա նախատեսել են վերցնել լիզինգային կարգով: Այսինքն, շահագործման ընթացքում փոխանցումը կատարվում է լիզինգային ավիաընկերությանը, սա իրենից ինչ-որ բանկ է ներկայացնում, որը գնում է Բոինգ ինքնաթիռներ, տալիս շահագործողին, որոնք էլ տարեկան եւ ամսական բանկին վճարանցումներ են կատարում:

– Որո՞ն թռիչքների ավելացման հնարավորություններ:

– Օրական մեկ ինքնաթիռը կատարում է մեկ չվերթ, ասենք, Երեւան-Մոսկվա, որը կազմում է 5 թռիչքաժամ: Մինչդեռ արտասահմանում, երբ ինքնաթիռն ընդամենը 5 թռիչքաժամ կատարի, ապա շահույթ չի բերի, այլ վնասով կաշխատի: Այնտեղ ինքնաթիռները օրական 14-18 ժամ թռչում են, համեմատվելու դեպքում, ինչ խոսք, ակնհայտ է, որ մի ինքնաթիռով կարելի է մինչեւ երկու չվերթ կատարել, օրինակ՝ Երեւան-Մոսկվա, որը կտա 10 թռիչքաժամ: Այսինքն, մենք միշտ թռիչքաղաղեսս ունենք եւ եթե հարկ լինի երկու ինքնաթիռ էլ կանգնեցնել վերանորոգման, դարձյալ չի ազդի չվացուցակի վրա:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

«Գրոյի» նիստը չկայացավ

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ՓԱՍՏ: «Գրոյի» գործով դատավարության այսօրվա նիստը չկայացավ փաստաբան Հնարամյանի բացակայության դատարանով: Ինչպես տեղեկացրեց փաստաբան Ռաֆանին, նա մնալու է շրջան բարձրանալու: Ու չնայած Ռեսոնին դատարան էր հանձնել գալ դատաքննական ճառով, բայց «նիստի ոգնեպով, որ նա ու Բարամյանն իրար հետ կատված են մահապարտում եւ գործի այլ նյութերով, նրա բացակայության դեպքերում ճառով նանիպես գալն անիմաստ եմ համարում»: Ռեսոնին անբարվելի էր անգամ նախագահողի «օրենքի խախտումով արդյո» ճառը ներկայացնելու առաջարկից հետո: Դեռեւ նաեւ, որ այսօր ոչ դատավճռության ընթացում առաջին անգամ նախագահող հանդի մանեց փաստաբանին, տեղի ունեցավ Մնացիս Եղայանին ուսումնական ներկայանալու համար. «Եթե դրանցով մի խանգիպ չի նախատեսում, նանրա էլ չկա»: Դատավարության հաջորդ նիստը կկայանա մայիսի 24-ին:

Պառավարում ԱԻՄ-ի դեմ զինված հարձակման կազմակերպիչները՝ կալանված

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 23-ին Կոտայքի մարզի Հրազդանի շրջանային ժողովրդական դատարանում տեղի կունենա դատական նիստ, որը նվիրված կլինի 1991թ.-ին ՀՀ նախագահական ընտրություններից առաջ Պառավարում Ազգային ինքնորոշում միավորման (ԱԻՄ) անդամների եւ ՀՀ նախագահի թեկնածու, ԱԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանի զինված հարձակման ենթարկվելու հարցին: Մայիսի 21-ին նշանակված նիստը հետաձգվել էր, քանի որ նախնական քննությամբ մեղավոր ճանաչված կողմը դարձյալ, ինչպես նաեւ ապրիլի 29-ի եւ մայիսի 8-ին դատավարությանը, չէր ներկայացել: Ըստ ԱԻՄ-ի լրատվական կենտրոնի, ժողովրդական կողմից մեղավոր կողմին բերման ենթարկելու անհաջող փորձին հաջորդել է մեղավորներին կալանելու որոշումը, որն արդեն իրականացվել է:

Ատոմակայանի «արձակուրդի» ժամանակ կաշխատեն ջերմակենտրոնները

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ատոմակայանի երկու ամսով դադարեցումից հետո բնակչության էլեկտրաէներգիայի ապահովման բնագավառում էական փոփոխություններ չեն լինի, Արմենպրեսի թղթակցին հայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարությունում: Ատոմակայանի արտադրած 7 միլիոն կվտ/ժամ էլեկտրաէներգիայի օրական ծավալը լրացնելու համար գործի կդրվեն փոխարինող հզորությունները՝ ներկայումս չգործող ջերմակենտրոնները: Այդ նպատակի համար օրական երեք միլիոն խորանարդ մետր գազ կտացվի ամերիկյան USAID կազմակերպության հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, որը «կաղույտ» վառելիքի համար վճարել է 15 միլիոն դոլար: Վառելիքի ներմուծումը հնարավոր է դարձել ԱՄՆ-ի հետ ունեցած պայմանագրերի շնորհիվ: Ներկայումս ԱՄՆ-ի կողմից ուսումնասիրվում են բանակցությունները, որպեսզի հետագայում ԱՄՆ-ի հետ ունեցած պայմանագրերի շնորհիվ ՀՀ-ն կարողանա ստանալ նաեւ միջուկային վառելիք: Ինչպես հայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարությունում, ատոմակայանի դադարեցումը ոչ մի դեպքում չի նշանակում, որ ատոմակայանը ամբողջությամբ կանգնեցվելու է: Ատոմակայանի դադարեցումը նշանակում է, որ ատոմակայանի 1-ին էներգաբլոկի 2-ին էներգաբլոկի ռեսուրսները, որոնք ունեն 25 տարվա աշխատանքային ռեսուրս, ավարտվելու են: Ատոմակայանի 1-ին էներգաբլոկի ռեսուրսը ավարտվել է 1989 թվականին, 2-ին էներգաբլոկի ռեսուրսը ավարտվելու է 1996 թվականի դեկտեմբերին: Ատոմակայանի դադարեցումը նշանակում է, որ ատոմակայանի 1-ին էներգաբլոկի 2-ին էներգաբլոկի ռեսուրսները, որոնք ունեն 25 տարվա աշխատանքային ռեսուրս, ավարտվելու են: Ատոմակայանի 1-ին էներգաբլոկի ռեսուրսը ավարտվել է 1989 թվականին, 2-ին էներգաբլոկի ռեսուրսը ավարտվելու է 1996 թվականի դեկտեմբերին:

ՀԱՄԱՌՈՏ

Տոնակատարություն՝ Սարդարապատի ճակատամարտի 78-ամյակին

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Արմավիրի մարզպետարանի հասարակայնության հետ կապերի եւ լրատվության բաժնից հայտնում են, որ Արմավիրի մարզպետարանի նախաձեռնությամբ մայիսի վերջին կիրակի օրը՝ 26-ը, հագեցած է լինելու մի շարք տոնակատարություններով ու հանդիսություններով, նվիրված Սարդարապատի ճակատամարտի 78-րդ տարեդարձին եւ Հայաստանի անկախության օրվան: Այդ օրը Սարդարապատի հուշահամալիրում հանդես կգան մարզային ու հանրապետական տարբեր համույթներ: Տեղի են ունենալու կենցաղային, ռազմա-մարզային, պատմա-մշակութային արարողություններ եւ կազմակերպվելու է անհայտ կորած եւ զոհված ազատամարտիկների երեխաների մկրտություն:

Առողջապահության կազմակերպությունը ամփոփում է մեկտարյա աշխատանքը

Այս շաբաթ ժնեւում ընթանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ամենամյա հերթական համաժողովի աշխատանքները: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է հիգիենայի եւ համաճարակաբանության գծով առողջապահության փոխնախարար Ա. Մկրտչյանը: Հայաստանը ներկայացված է Կովկասյան տարածաշրջանի խմբում, որը համատեղ ծրագիր է ներկայացրել: Համաժողովում ենթարկման են դրված արդի փուլում խիստ վտանգ ներկայացնող համաճարակային հիվանդությունների խնդիրները: Ա. Գ

Բնակարանների սեփականաշնորհումը կվերսկսվի հաջորդ շաբաթ

ԵՐԵՎԱՆ, 22 ՄԱՅԻՍ, ՓԱՍՏ: Ժամանակավոր դադարից հետո բնակարանների սեփականաշնորհումը նախատեսվում է սկսել մայիսի 27-ից: Համաձայն երեւանի քաղաքապետարանի շենքերի եւ շինությունների շահագործման ծառայությունից ստացված տեղեկատվության, բնակարանների սեփականաշնորհման ժամանակավոր դադարեցումը պայմանավորված էր քաղաքային իշխանության ոլորտում իրականացվող կառուցվածքային փոփոխություններով: Ըստ նույն աղբյուրի, այդ հարցերն արդեն հստակեցվել են եւ այսուհետ բնակարանների սեփականաշնորհումով զբաղվելու է քաղաքապետարանի շենքերի եւ շինությունների շահագործման ծառայությունը:

ԿԸՀ-ն կմերժի՞ գրանցել Վանաձորում ՀՅԴ թեկնածուին

Վանաձոր քաղաքի թիվ 63 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու էր գրանցված ՀՅԴ անդամ, Հյուսիս-արեւելյան կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Լոյանը: Սակայն քվեարկությունից հինգ օր առաջ, մայիսի 21-ին թիվ 63 ընտրատարածքային հանձնաժողովը չեղյալ է համարել նրա գրանցումը եւ դիմել կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ հաստատելու իր որոշումը: Պատգամավորության թեկնածուի տվյալներով, նույն օրը Վանաձոր է ժամանել ԿԸՀ-ի նախագահ Ռոբերտ Ամիրյանը: Երեկոյան, առանց նրա մասնակցության տեղի է ունեցել հանձնաժողովի նիստ, ուր հայտարարվել է Դավիթ Լոյանի պատասխանատվությունը մեծաթիվ կեղծ ստորագրությունների առկայության մասին: Դավիթ Լոյանի վստահված անձինք անմիջապես ստուգել են դրանց իսկությունը, իսկ ստորագրողները վստահեցրել են, որ անձամբ ստորագրել են թեկնածուի օգտին: Անհաջողության մատնվելով, հանձնաժողովը երկու ժամով դադարեցրել է նիստը, այնուհետեւ շարունակել նոր մեղադրանքով: Դավիթ Լոյանին այս անգամ անուղղակիորեն մեղադրել են ընտրողների շրջանում արգելված քարոզչամեթոդներ օգտագործելու համար: Թեկնածուի հավանությամբ այդ ամենը հերյուրանք է եւ իր գրանցումը չեղյալ հայտարարելու պատճառները սոսկ քաղաքական են: Հանձնաժողովը 9 կողմ, 1 դեմ եւ 3 ձեռնպահով չեղյալ է հայտարարել նրա գրանցումը: Որոշումը վաղը կմնարկվի նաեւ կենտրոնական ընտրական հանձնաժողովում: Հիշեցնենք, որ Դավիթ Լոյանը մասնակցել է նաեւ Աժ հուլիսի 5-ին կայացած ընտրություններին եւ կրկնակի ձայներ հավաքել «Հանրապետություն» բլոկի ներկայացուցչից: Ռ. Ն.

Ռադիացիոն մոնիտորինգի համակարգ ՀԱԷԿ-ում

«Ազգը» տեղեկացրել էր ՀԱԷԿ-ում տեղադրվելիք ռադիացիոն մոնիտորինգի (ավտոմատ հսկողության) համակարգի մասին: Ինչպես պարզեցին ՀՀ «Պետատոմհսկողություն» վարչության փրկարարական ղեկավարման գլխավոր տեսուչ Ալոս Մնացականյանից, համակարգը կազմված է տվիչներից (առայժմ դրանք 4-ն են, բայց առաջիկայում, ըստ անհրաժեշտության, կտրվեն հասցվել 256-ի) եւ 3 IBM-456 տիպի համակարգիչներից: Տվիչները կարողանալու են ճառագայթման մակարդակի անընդհատական չափումներ եւ տվյալների հաղորդումը համակարգիչներին հետագա վերամշակման նպատակով: Համակարգիչներից մեկը կտեղադրվի ատոմակայանի ղեկավարման վահանակում եւ կգտնվի անմիջական հերթափոխի ղեկի հսկողության տակ, մյուսը՝ վարչությունում ձեւավորվող վիրակային արձագանքման կենտրոնում, 3-րդը՝ քաղաքացիական պաշտպանության հանրապետական շտաբում: Ռադիացիոն ավտոմատ վերահսկողության համակարգը հնարավորություն կտա ճառագայթման տարբեր դարբերականությամբ, հետաքրքիր, ձեռքի սարքավորումներով իրականացվող գործ ճշտության չափումները փոխարինել ճշգրիտ օդերեւութային վերահսկողությամբ: Բացի դրանից, այն թույլ կտա աշխատել սովորական եւ վիրակային չափումների ռեժիմներում, ի տարբերություն նախկինում կիրառվողի, երբ ֆարթեր իրավիճակներում հարկ էր լինում դիմել տարբեր սարքավորումների ծառայությունը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 2-տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՍԱԿՈՒ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍՍԱՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ ասամբնները ՊԱՅԵԼ ԴԱՆԱՍԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային ասամբնը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀՐԱԺԵՇՏ

Նորբերտ Հայնցե. «Հայ-գերմանական հարաբերությունների զարգացումը դահանջում է երկուսեմ անընդմեջ աշխատանք»

Մայիսի վերջին Հայաստանում ԳԴՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Նորբերտ Հայնցեն կավարտի իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում: Նորբերտ Հայնցեն առաջին ռեզիդենտ դեսպան է նշանակվել Բահրեյնում: Պրն. Հայնցեի առաջին դեսպանական պաշտոնը, փաստորեն, եղավ Հայաստանում: Նախկինում նա ծառայել էր Բանգկոկում, Մոսկվայում, Լոնդոնում, Մեխիկոյում եւ Վարշավայում: Նույնան տաղան լրատվական գործակալության թղթակից Գայանե Մուրոյանի հարցերին է պատասխանում պրն. Հայնցեն:

– Երկայնումս հաճախ է խոսվում հայ-գերմանական հարաբերությունների աշխուժացման մասին: Ինչո՞ւ եք Դուք գնահատում այդ հարաբերությունների արդի վիճակը եւ ի՞նչ բայլեր կարելի է ձեռնարկել դրանց նոր խթան տալու համար:

– Իրոք հայ-գերմանական հարաբերությունները վերջին մեկ-մեկուկես տարիների ընթացքում բավականին զարգացել են: Դրա արտահայտությունները են գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաների ֆեդերալ նախարար Շոյրանգերի, արտգործնախարար Քինկելի եւ ԳԴՀ Բունդեսթագի փոխնախագահ Քլայնի այցելությունները Հայաստան: Հարաբերությունները ընդգրկում են միջազգային համագործակցության բոլոր բնագավառները: Այդ ուղղությամբ դահանջվում են ոչ թե նոր ձեռնարկումներ, այլ երկուսեմ անընդմեջ աշխատանք:

– Վերջին շրջանում հաճախ է նշվում, որ Հայաստանում ստեղծվել են արտաքին ներդրումների համար բարենպաստ պայմաններ: Արդյո՞ք են այդ պայմանները բարենպաստ եւ ինչպիսի՞ բայլեր են արվում դեսպանության կողմից գերմանական գործարար շրջանակներին դեպի Հայաստան կողմնորոշելու ուղղությամբ:

– 1995 թ. դեկտեմբերին Երեւան կատարած այցելության ընթացքում Դեսպան Քինկելը եւ ՀՀ արտգործնախարար պարոն Փափազյանը ստորագրեցին պայմանագիր կապիտալ-ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին: Այդ պայմանագիրը կնպաստի ներդրումներն: Ներդրման պայմանները Հայաստանում անկասկած բարելավվել են, չնայած, դեռեւս շատ բան կա անելու: Պետք է մտածել այն հաղորդակցական ուղիների, տրանսպորտային կապերի, ծառայությունների պորտի, ենթակառուցվածքների ու այլ բնագավառների բարելավման մասին, որոնք խոչընդոտում են գերմանացի մասնավոր գործարարին ներդնել իր դրամը Հայաստանում:

– Բաղաքացիական հասարակության, ժողովրդավարական եւ իրավական պետության կառուցումը հասարակ բան չէ, եւ Հայաստանը, կարծես թե վերջին երկու-երեք տարիներին որոշ չափով զիջել է դիրքերը իր մի շարք ձեռքբերումներից: Այդ կառակցությամբ ի՞նչ կցանկանայիք ներկայիս իշխանություններին, ընդդիմությանը, Հայաստանի քաղաքացիներին:

– Թույլ տալ հիշեցնել, որ հասարակության վերափոխման եւ նորացման գործընթացը ոչ միայն դժվարին, այլ նաեւ երկարատեւ գործընթաց է, որը արտաքնապես չդրսեւորվում առաջընթաց, բնակչության մեծ մասից զոհաբերություն է պահանջում: Այդ գործընթացի հաջողությունն ի հայտ կգա այնքանով, որքանով որ հին համակարգը կփոխարինվի նորով, եւ որի գնահատականը դեռեւ է անկախ եւ չեզոք դատավորներ տան:

Մարդու իրավունքների դասընթաց Վանաձորում

Վանաձորի մանկավարժական ինստիտուտում ավարտվեց մարդու իրավունքների դասընթացը, որ կազմակերպել էր եւ անցկացրեց Հայաստանի Սահմանադրական իրավաքաղաքական կենտրոնը: Դա Լոռվա մարզում եւ Հայաստանում կազմակերպված նմանատիպ առաջին դասընթացն էր: Թվով 32 ունկնդիրները դասախոսներ, լրագրողներ, իրավաբաններ, ուսուցիչներ էին եւ այլոք: Դասընթացի ծրագրով ունկնդիրները դասախոսություններ լսեցին հետեւյալ թեմաներով. մարդու իրավունքների հասկացությունը, մարդու իրավունքների փիլիսոփայական եւ պատմական հիմունքները, սահմանադրության եւ քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգերը, միջազգային մարդասիրական իրավունքը, ռազմական խտրականության եւ տանջանքների դեմ միջազգային պայքարը, կանանց եւ երեխաների իրավունքները, սեկտության ժամանակակից ձեւերը, ազգային փոքրամասնությունների եւ բնիկ ժողովուրդների իրավունքները, մարդկանց բռնի պնդեցումները, առանց դատաքննության կամայական մահապատիժները եւ այլն: Դասախոսությունների ընթացքում ունկնդիրները դիտեցին Հայաստանում ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվական բաժնի տրամադրած թեմատիկ տեսաֆիլմեր, ունկնդրեցին ռադիոձայնագրություններ, որոնց բարգմանությամբ եւ մեկնաբանությամբ հանդես եկավ կենտրոնի անդամ, մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոս Զինա Ջաղինյանը: Դասախոսությունների ընթացքում կազմակերպվեցին տեստեր եւ քննարկումներ: Ունկնդիրներին բաշխվեց համապատասխան գրականություն: Դասընթացը նախապատրաստել էր եւ վարեց կենտրոնի նախագահ Գեւորգ Մանուկյանը: «Կարծիք» վերլուծական կենտրոնի կողմից դասընթացի վերջում անցկացված հարցման արդյունքներով նմանատիպ միջոցառումը խիստ անհրաժեշտ համարվեց: Նախատեսվում է Լոռվա մարզկենտրոնում շարունակել մարդու իրավունքների ամենամյա դասընթացները:

ՄԱՌՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Բուժում Փիլիպիններում... Ուղեւորությունը սկսվում է Երեւանից

Վերջին տարիներին ռուսաստանյան մամուլը բավականին հաճախ է անդրադառնում մոսկովյան «Ալլանս բրեյլ» ընկերությանը, որն իր գործունեության մեջ ուղղակիորեն առնչվում է մարդկության բերեւս ամենից առեղծվածային խնդիրներից՝ ֆիլիպինյան հիլլերների (հեքիմների) բենոմենին: Պայմանավորվածություն ունենալով հայտնի հիլլեր Ռամոն (Տուն) Լաբոյի հետ, հիշյալ ընկերությունում կազմակերպում եւ իրականացնում են Փիլիպիններում բուժման ուղեւորություններ եւ զուտ էկզոտիկ ճանապարհորդություններ:

Հիլլեր բառը ծագում է անգլերեն հեալ բառից, որ նշանակում է բուժել: Այդ արհեստը սովորեցնում են «Փիլիպինների բիսոնյանների հոգեւոր միությունում»: Ռամոն (Տուն) Լաբոն ներկայիս ամենահայտնի ճանաչված հիլլերներից է, ում մատները կյանք են տվել Լիբիայի նախագահ Մուհամար Քադաֆիին, Փիլիպիններ-ի նախկին նախագահ Ֆերդինանդ Մարկոսին, ամերիկյան աստղահանդեսային դերասան Բերտ Լանկասթերին, այլ հայտնի ու անհայտ մահկանացուների: Վիրահատման մեխանիզմը հետեւյալն է՝ հիվանդը դասկում է մահճակալին, բժիշկը մերկ ձեռքով շոշափում է հիվանդի մարմինը, հայտնաբերում հիվանդ օրգանը, ճզքում հիվանդության դասծանը: Այնուհետ բժշկի մատները մխրճվում են հիվանդի մարմնի մեջ, գայթում է արյունը, բժիշկը հանում եւ շորտում է հիվանդության դասծան հյուսվածքները: Հիվանդի մարմինը սրբում է մաքուր շորով, նա բարձրանում է մահճակալից եւ հեռանում: Ի դեպ, ոմանք պնդում են, որ Փիլիպինյան հիլլերները ի վիճակի են վերծնել ոչ միայն շաբարախտը, քաղցկեղը, այլ նաեւ... ՁԱՎ-ը (սպիդ): Ռամոն (Տուն) Լաբոն ժամանակին Մոսկվա էր ժամանել իր հրաշագործությունները ցուցադրելու, սակայն բարեկամության տանը նախատեսվելիք բուժման սեանսները արգելվեցին քաղաքական նկատառումներով: Այնուամենայնիվ, ցուցադրված տեսաերիզները ցնցեցին Մոսկվայի հասարակությանը: Հայտնի հիլլերը բազմիցս հրավիրվել է աշխարհի շատ երկրներ՝ ԱՄՆ-ից մինչեւ Ճապոնիա:

«Ալլանս բրեյլ» ընկերության փոխտնօրեն պարոն Վլադիմիր հարցազրույցներից մեկում նշել է, որ Անդրկովկասի բնակիչներից շատերը ցանկություն են հայտնել ընդգրկվել իրենց խմբերում եւ բուժվել Բագիրում տեղակայված բժիշկ Լաբոյի կլինիկայում: Նրան հայտնի է նաեւ, որ Հայաստանի որոշ քաղաքացիներ ձեռնարկել են նման մի ուղեւորություն, ծախսելով մինչեւ 10 հազար ԱՄՆ դոլար: Պարոն Վլադիմիրի կարծիքով, Անդրկովկասում «Ալլանս բրեյլի» հանդիպատախտի բաժանմունքներ ունենալու դեպքում զգալիորեն կնվազեին մենկող քաղաքացիների նյութական ծախսերը, ինչպես նաեւ կվերացվեր ժամանակի կորուստը:

Վերջերս Թբիլիսիում «Ալլանս բրեյլը» ստեղծեց նման մի կետ, իսկ այսօր արդեն ընկերությունը գործակալ ունի նաեւ Երեւանում: Զուցակիցս է «Արագ» ՍՊԸ տուրիզմի գծով փոխտնօրեն, «Ալլանս բրեյլի» հայաստանյան գործակալ Արամ Ալանակյանը: «Այսօր մենք պատրաստ ենք մեր գրասենյակում ընդունել Փիլիպիններում բուժվելու ցանկություն եւ հնարավորություն ունեցող հայաստանի բոլոր քաղաքացիներին: Նրանք ազատվում են ավելորդ անգամ Մոսկվա մեկնելու, այնտեղ միաժամանակ բնակվելու, դիվանագիտական փաստաթղթեր ձեւակերպելու ծախսերից: Երբեմն հարկ է լինում մի քանի անգամ մեկնել Մոսկվա եւ դա կրկին կապված է ծախսերի հետ: Մեզ դիմելու դեպքում քաղաքացիները կխնայեն եւ ժամանակ, եւ գումարներ: Էլեկտրոնային փոստի միջոցով անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպումը կտեւի ընդամենը մի քանի օր: Մեր այցելուների ուշադրությանը կհանձնվեն տեսաերիզներ, որ նկարահանված են բժիշկ Լաբոյի վիրահատությունները: Հասկանալի է, որ տարբեր հիվանդությունների բուժումը տարբեր ժամանակամիջոց է պահանջում: Սովորաբար երեք օրը բավականացնում է: Ավելի խարդ հիվանդությունների դեպքում պահանջվում է մինչեւ 10 օր: Այդ պայմանավորվածությամբ ուղեւորությունների տեւողությունն է 7 կամ 12 օր: Առաջին դեպքում ճանապարհորդության արժեքն է 2730 ԱՄՆ դոլար, երկրորդ դեպքում 4300 դոլար: «Աերոֆլոտի» ինքնաթիռներով Մոսկվա-Մանիլա-Մոսկվա ուղեւորությունը, հիլլեր Ռամոն (Տուն) Լաբոյի կլինիկայում բուժվելը, ինքնատդանի հյուրանոցում բնակվելը եւ պարզապես էկզոտիկ երկրին ծանոթանալու ծախսերը մտնում են ուղեգրի արժեքի մեջ:

«Արագաս» ՍՊԸ-ի հասցեն է՝ Վռամաշատի արքայի 26 (նախկին Ամիրյան փողոց, Քիմիական տեխնիկումի բակում): Հեռախոս՝ 53-65-42, 53-65-32:

Ա. Դ.

Ճմեռն անցավ, եւ երկիրն սկսեց նոր ծնունդներ տալ

Կենդանաբանական այգին վերջին տարիների ձմեռների ամենահաջողելի օղակներից մեկ էր: Եւ ոչ միայն գրչի պատճառով: Չնայած մեծ կորուստներին, այն շարունակում է հնարավորություն ունենալ հետաքրքրել այցելուներին: Նրանցից ոմանք առիթ ունեցան այս ուրախ ապրումը կիսելու մեր ընթերցողներին: Դա պետք էր վերջին, որ հիմա չկա: Անշուշտ, պետք էր ձիարշավարանի նմայգներին տալիս աղաղակելու: Բայց նրանք էլ արդեն չկան: Իսկ ոչ հեռու եւ խորհրդային անցյալ ունեցող Ռուսաստանում անգամ կենդանաբանական այգիներ մեծ բիզնեսի հիմք են ծառայում: Նաեւ անմիջականորեն առնչվում են «տեսարժան վայր» տուրիզմի անհրաժեշտ բաղադրատարրի հետ: Իսկ առջեւում շաքամատային օլիմպիադա է սպասվում:

Ասում են, որ Հեղկասասնից նոր փիղ պետք է բերեն: Բայց երեխի վիզա չկա...

Ով պատասխանատվության սանդղակի որտահատվածում ունի, պետք է հանձնաժողով, որ բան ոչ չնչի դարձնում:

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻՍՅԱՆ.



digitised by A.R.A.R.@

Արցախ

ԵԱՀԿ իրավասության կառույցը ճանաչել է ԼՂՀ անկախությունը

– Ձեր գլխավորած կոնգրեսը, փաստորեն, ԼՂՀ անկախությունը ճանաչած առաջին միջազգային կազմակերպությունն է: Ինչո՞ւ ծնունդ առավ այդ որոշումը:

– Դուք երևի հիշում եք, որ 1991 թ. ԵԱՀԽ որոշմամբ ԽՍՀՄ-ում անցկացվեց մարդկային զարգացման վիճաժողով, որի շրջանակներում կազմակերպվեցին մի շարք կոնգրեսներ, սեմինարներ ու խորհրդակցություններ: Երկու հաստատական կազմակերպության ԼՂ իրավունքների պաշտպանության անկախ ընկերակցությունը և Հայաստանի բարեկամների ընկերությունը հանդես եկան «Ազգամիջյան հակամարտությունների կարգավորման իրավական, քաղաքական և բարոյական ասպեկտներ» ճանաչելով միջազգային կոնգրես հրավիրելու նախաձեռնությամբ: Անցկացման վայր ընտրվեց Երևանը, քանի որ մենք որոշեցինք հիմնական ուշադրությունը հատկացնել Անդրկովկասի տարածաշրջանին: ԵԱՀԽ դեկավարությունը մեզ բնդունեց իր բոլոր ծրագրերում և խոստացավ կոնգրես ուղարկել աշխարհի տարբեր երկրների խորհրդարանների 50 դաս զանվածներ: «Երիտասարդական» հյուրանոցում 5 օր անցկացված կոնգրեսի աշխատանքին մասնակցում էր մոտ 200 մարդ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Էստոնիայի, Լիտվայի և այլ երկրների դասգամավորներ, իրավաբաններ, մասնագետներ, հասարակական գործիչներ: Նրանց մեջ կային աշխարհում հայտնի իրավաբան-տեսաններ, մասնավորապես, ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանի Մարդու իրավունքների ինստիտուտի տնօրեն Հանս-Պետեր Գեյգերը, փարիզյան «Զա նովի գրանդիզմ» թերթի խմբագիր Դեորգի Կրասավինը և ուրիշներ: Մենք երկու օր ելնելեցինք ԼՂ կրասած այցին, եղանք Ստեփանակերտում և Շահումյանի շրջանում, որտեղ եւ բարելվեցինք ադրբեջանական կող մի հրթիռակոծմանը: Մեզ վրա արձակվեց 63 հրթիռ, և դարաշրջս հրաշքով ողջ մնացինք: Դրանից հետո Երևանում 1991 թ. սեպտեմբերի 22-ին կայացած եզրափակիչ նիստում կոնգրեսի մասնակիցներն բնդունեցին բանաձև ԼՂՀ անկախության ճանաչման մասին: Այդ փաստաթուղթ, ինչպես նաև Սոչգայիին, ԼՂ-ում խորհրդային զորքերի գործողություններին և գաղտնալսումներին առնչվող բանաձևերը մենք ուղարկեցինք ԵԱՀԽ մասնակից բոլոր երկրների խորհրդարաններ և ԽՍՀՄ ԱԳՆ: Մեր բնդունած փաստաթղթերն արժանացան ԵԱՀԽ դեկավարության հավանությանը, քանի որ բնդունվել էին հաշվի առնելով միջազգային իրավունքի բոլոր դրույթները:

Ներկայումս կոնգրեսը դեկավարում են երկու համանախագահ. մեկը ես եմ Ուկրաինայից, մյուսը Գալինա Կոլիկովան Ռուսաստանից: Փաստորեն, երկրորդ համանախագահը Գալինա Կոնսանտինովնան է Սանկտ Պետերբուրգից: Գործում է նաև II մարդուց բաղկացած կազմկոմիտե: Նրանցից մեկը՝ ուկրաինացի Նիկոլո Կիչմարը, զոհվեց Ստեփանակերտում Շուշիից ձեռնարկված գնդակոծությունների ժամանակ:

Այսօր մեր հիմնական խնդիրն է առավել ակտիվորեն ազդել Մինսկի խմբի եւ ԵԱՀԿ դեկավարության, այդ կազմակերպության մասնակից երկրների կառավարությունների վրա՝ ճգնաժամի դրական լուծման նպաստակով: Մենք կնում ենք այն սկզբունքից, որ Ղարաբաղը չպետք է անցնի ոչ Հայաստանին, ոչ էլ Ադրբեջանին: Թող ԼՂՀ-ն լինի ինքնուրույն պետություն միջազգային խիստ վերահսկողության ներքո: Կարծում եմ, դա վավերագրական տարբերակ է, որը պետք է բավարարի բոլոր կողմերին:

– Դուք հանդիպումներ եք ունեցել հակամարտ կողմերի ներկայացուցիչների հետ:

– Նրանց հետ մենք որոշումներ ենք անչափ սերտ կապեր, անցկացնում խորհրդակցություններ, ճշտում դիրքորոշումն այս կամ այն հարցում: Ես եղել եմ Բաքվում, հանդիպել Ալիևին, այստեղ Տեր-Պետրոսյանին, ԼՂՀ դեկավարությանը: Անկեղծ ասած, ադրբեջանական կողմը մեզ վերաբերվում է զգուշավորությամբ, երբեմն էլ բնեամեռությամբ, բայց մենք դրան ուշադրություն չենք դարձնում: Չգտում ենք Ղարաբաղի խնդրի լուծման մեջ հասնել արդարության և անաչառության:

– Դուք, որպես Ուկրաինայի ներկայացուցիչ, փորձել եք ճնշում գործադրել ձեր իշխանությունների վրա, որոնք ոչ հեռու անցյալում գնել էին մասակարարում Ադրբեջանին:

– Նախնապես. Անդրկովկասի զինվորական օկրուգի զինամթերքի պահեստներից զենքի հսկայական մասը Ադրբեջանին է հասնել Ռուսաստանը: Մենք այն ժամանակ վճռական բողոք հայտնեցինք որպես դեսպանության նախարար մարշալ Շապոշնիկովի գործողությունների դեմ, նշելով, որ Ռուսաստանը խախտում է միջազգային պարտավորությունները, սոնցով չի բացառվում զենք առաքել հակամարտության գոտիներ: Ամենի աչ պարզից, որ Ուկրաինան էլ երկա անգամ զենք է վաճառել Ադրբեջանին: Մենք բանակցություններ վարեցինք Ուկրաինայի ԱԳՆ, դեկավարության հետ, պարզաբանելով, որ թրքական ենք պաշտոնական Կիևի դիրքորոշումը, որը գանկանում է խոսքից խՍՀՄ փլուզումից հետո մնացած հսկայական թվով տանկեր, բնդգծելով, սակայն, որ Կիևը խախտում է ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի բանաձևերը: Մեր հայրը բնկաղմեց թրքոռումով, հանձնայն դեպք, եկազայում նման առաքումներ չեղան:

– Որքան հայտնի է, Դուք մինչև օրս հանդես եք գալիս հաշտության բանակցություններում Թուրքիայի բացառման օգտին, թեև Հայաստանի եւ Ղարաբաղի ներկայացուցիչների հայտարարությունների համաձայն, այդ երկիրը վերջերս համեմատաբար անաչառ դիրք է բռնել:

– Այո, մեր դիրքորոշումն այդ հարցում մնում է անփոփոխ: Խաղաղարար չի կարող լինել այն դերությունը, որը շարունակում դասանի տնտեսական շրջափակումը: Նրանց հետ դեռևս ոչ մի բանակցություն չի տարվել: Ինչպես նաև Ադրբեջանի հետ: Ինչպես նաև Ադրբեջանի հետ: Ինչպես նաև Ադրբեջանի հետ

ԱԶԳ

Միջազգային

Այր հայրենիք կուսակցության ստեղծման 13-րդ ամյակի եւ հունիսի 2-ին կայանալիք տեղական ընտրությունների կապակցությամբ սկսվել է կուսակցության ղեկավար, վարչապետ Մ. Յըլմազի շրջագայությունը: Յըլմազը այցելեց Սամսուն եւ մասնակցեց կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպված հանդիսավոր ճաշի: Այնուհետեւ Սամսունից մեկնեց Էրզրում, որտեղ նույնպես տեղի ունեցավ բազմահազարանոց հանդիսավոր: Դիմելով ժողովրդին, Յըլմազն ասաց. «1983 թվականին, երբ կուսակցությունը գտնվում էր իր կազմավորման սկզբնական փուլում, թուրքական քաղաքական շրջանակներում ոչ մեկը չէր ուզում ընդունել կուսակցության գոյությունը: Բայց հենվելով ժողովրդի վրա եւ ծառայելով նրան, կուսակցությունը գնալով ամրացավ եւ վերջին 8 տարում դարձավ երկրի կառավարող կուսակցություն: Իսկ Մայր հայրենիք կուսակցությունը Թուրքիայի քաղաքական ու տնտեսական կյանքում զգալի առաջադիմիչ դեր խաղալով դարձավ ժողովրդի ամենավստահելի քաղաքական ուժը: Մենք կշարունակենք Անատոլիայի զարգացման ծրագրի իրականացման, ահաբեկչության դեմ մղվող պայքարը վերջնական նպատակին հասցնելու, տնտեսության զարգացման եւ այլ կարեւոր խնդիրների իրականացման աշխատանքները:

